«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ

ԵՆԹԱԹԵՄԱ՝ ԴՊՐՈՑԻ և ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱԶԴՈՒՄ Է ԱՐԴՅՈ՞Ք ԱՇԱԿԵՐՏԻ ՈՒՍՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎՐԱ

ԱՌԱՐԿԱՆ՝ ԱՆԳԼԵՐԵՆ

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԳՈՀԱՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
ԳԼՈՒԽ1. ԸՆՏԱՆԻՔ –ԴՊՐՈՑ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՇԱՀԱՎԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆ.... 5
1.1.ԴՊՐՈՑԻ և ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՇԱԿԵՐՏԻ ՈՒՍՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ.... 10
1.2. ԴՊՐՈՑԻ և ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՇԱԿԵՐՏԻ ՈՒՍՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ.... 18
ԳԼՈՒԽ2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.... 24
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.... 27
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.... 28

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականություն: Սովորողների դաստիարակության և կրթության գործընթացը բխում է առաջին հերթին հասարակության զարգացման պահանջներից, սովորողների դաստիարակության և կրթության գործընթացից: Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգերի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ: Մատաղ սերնդի լավագույն կրթության, այն արդյունավետ նախապատրաստման և իրականացման հիմնախնդիրները բոլոր ժամանակներում էլ հուզել են մտածողներին: Այսօր կրթական գործընթացում առկա խնդիր է դարձել անձի հոգեբանական, բարոյական, մտավոր, ֆիզիկական առողջության պահպանումը:

Դպրոցահասակ երեխաներ ունեցող ծնողների մեծագույն մտահոգություններից մեկը հաճախ կապված է լինում ուսումնական ցածր առաջադիմության հետ: Կրտսեր դպրոցականների ուսումնական մոտիվացիան հիմնականում բարձր է լինում:

Երեխան իսկապես դառնում է դպրոցական այն ժամանակ, երբ ձեռք է բերում համապատասխան ներքին դիրք: Նա ներառվում է իր համար նշանակալից ուսումնական գործունեության մեջ՝ կողնորոշվելով այն բանի հասարակական արժեքի վրա, ինչ անում է:

Հետազոտության օբյեկտը՝ դպրոցականների ուսուցման գործընթացն է:

Հետազոտության առարկան՝ աշակերտների ցածր առաջադիմության պատճառները:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել աշակերտների ցածր առաջադիմության պատճառները և դրանց հաղթահարման ուղիները:

Հետազոտական աշխատանքի խնդիրներն են՝

- ուսումնասիրել ուսուցման գործընթացի կազմակերպումը միջնակարգ դպրոցում և ուսուցման արդյունքների գնահատման համակարգը,
- բացահայտել ուսուցչի անձնային և մասնագիտական որակները ու դրա նշանակությունը ուսուցման գործընթացում,

- բացահայտել աշակերտի ցածր առաջադիմության պատճառները,
- ուսումնասիրել դպրոցի և ընտանիքի համատեղ աշխատանքը աշակերտի ուսման առաջադիմության գործում,
- բացահայտել ուսուցչի աշխատանքի դերը ցածր առաջադիմության հաղթահարման ուղղությամբ:

Հետազոտության մեթոդները: Սույն հետազոտության խնդիրները լուծելու համար կիրառել ենք հետազոտական հետևյալ մեթոդները՝ գրականության ուսումնասիրման, վերլուծության և համադրության, ընդհանրացման, զրույցի, սոցիոլոգիական հարցման:

ԸՆՏԱՆԻՔ –ԴՊՐՈՑ ՓՈԽՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՇԱՀԱՎԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆ

Ընտանիք ինստիտուտի կարևորությունը և կրթական համակարգի բարեփոխման աշխատանքները վերջին տասնամյակներին հանգեցրել են երեխաների դաստիարակության երկու գլխավոր սուբյեկտների՝ ընտանիքի և դպրոցի փոխհարաբերությունների բնույթի արժևորմանը: Ժամանակակից հայեցակարգերի համաձայն՝ դաստիարակության հիմնական նպատակը երեխայի անձնական զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումն է: Ընտանիքն այդ նպատակին հասնում է ծնողների ակտիվ մասնակցության, աջակցության և երեխայի մեծանալու տարբեր ժամանակահատվածներում առաջացած խնդիրների լուծման միջոցով: Ժամանակակից կրթության խնդիրն, առաջին հերթին, ծնողների պասիվ ներգրավվածությունն է սեփական երեխայի դաստիարակությանը և պատասխանատվության ոչ բավարար մակարդակն է երեխայի կյանքի, առողջության և նրա կայուն ապագայի հանդեպ:

Ընտանիքը երեխայի հետ կապված է ազգակցական կապով, որում բարձր է հուզական բաղադրիչը և երեխայի կյանքի ու ապագայի հանդեպ պատասխանատվության զգացումը: Այդ գործոնները սահմանում են ծնողների դաստիարակչական գործողությունների խորապես անձնային բնույթը: Մանկավարժի դաստիարակչական պարտականություններն են սովորողին նոր գիտելիք փոխանցելն ու սոցիալական վարքագծի կանոնների և նորմերի հետ երեխային ծանոթացնելը: Մանկավարժի գործողություններն իրականացվում են մասնագիտական պարտականությունների շրջանակում և չեն առնչվում ազգակցական կապի կամ հուզական կախվածության հետ: Ի տարբերություն ծնողների, որոնք իրականացնում են իրենց դաստիարակչական գործառույթը շուրջօրյա, մանկավարժն այդ գործունեությամբ զբաղվում է միայն դասի ժամանակ:

Ելնելով նրանից, որ մանկավարժներն ունեն մասնագիտական իրավասություն դաստիարակության հարցերում, հենց դպրոցը, առաջին հերթին, պետք է հանդես գա որպես ընտանիքի՝ իբրև երեխայի առաջին դաստիարակչի հետ գործնական փոխգործության նախաձեռնող: Ընտանիքի ու դպրոցի համաձայնեցված համատեղ գործողությունները հանդիսանում են երեխայի անձի լիարժեք զարգացման

հաջողության գլխավոր պայմանը: Հարկավոր է նկատել, որ նշված համագործակցությունը որոշ չափով կրում է ստիպողական բնույթ, քանի որ դաստիարակության երկու ինստիտուտներից յուրաքանչյուրն ունի մյուս սոցիալական ինստիտուտի աջակցության և օգնության օբյեկտիվ պահանջ: Ընտանիքն ու դպրոցը ներկայացնում են յուրօրինակ «երթուղային զույգ», որի ձգտումներն ուղղված են երեխայի դաստիարակության ընդհանուր նպատակի նվաճմանը:

Ծնողների ու մանկավարժների արդյունավետ փոխգործակցության անհրաժեշտ պայման է հանդիսանում իրենց դաստիարակչական ջանքերի տարբերակ-վածությունը՝ փոխլրացման սկզբունքով: Եթե դաստիարակության յուրաքանչյուր սուբյեկտի գործողություններն իրականացվում են առանց հաշվի առնելու մյուս սուբյեկտի գործողությունները, ապա դա հանգեցնում է գործընթացի ձևականացմանը, համագործակցությունից հրաժարվելուն և միմյանց հանդեպ վստահության նվազմանը: Գործառույթների անհամաձայնությունը ծնում է անգործություն կամ անվստահություն ընդհանուր դաստիարակչական գործունեության մեջ հաջողության հասնելու նկատմամբ:

Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Ծնողների և ուսուցիչների համագործակցությունը ենթադրում է նաև երեխային ներկայացվող միասնական պահանջների, նրա զարգացման ծրագրերի և մեթոդիկաների մշակում: Ծնողների հետ տարվող աշխատանքի արդյունավետության ապահովման նպատակով կիրառվում են նրանց հետ կապի տարբեր ձևեր: Առանձին մանկավարժների գործելաոճում այդ կապը սահմանափակվում է ուսումնական կիսամյակի վերջում առաջադիմության արդյունքների ամփոփմամբ, ծնողական ժողովներ անցկացնելով, ուսման մեջ հետ մնացող կամ անկարգապահ աշակերտների ծնողներին դպրոց կանչելով և նախատելով: Նման մանկավարժները իրենց աշակերտների ընտանեկան պայմաններին լավ ծանոթ չեն և ոչ միշտ են

աշակերտների դաստիարակության հարցերը կարգավորում ծնողների հետ համաձայնեցված [2;47]:

Նպատակահարմար է ծնողների հետ համագործակցությունը կազմակերպել խմբային և անհատական ձևերով: Ծնողական ժողովներում սկիզբ առած բացատրական աշխատանքը պետք է շարունակել տանը և դպրոցում ծնողների հետ անհատական հանդիպումների ժամանակ: Ծնողների հետ անհատական զրույցները հաճախ թելադրում են կոլեկտիվ աշխատանքի ձևեր ու բովանդակություն՝ նպաստելով բոլոր ծնողների հետ անցկացվելիք անհրաժեշտ միջոցառումների նախանշմանը և կազմակերպմանը: Երբեմն ծնողական ժողովներն ընթանում են սակավամարդ կազմով: Այդպես լինում է այն դեպքում, երբ դասղեկն անհրաժեշտ շփման եզրեր չի փնտրում աշակերտների ընտանիքների հետ: Հարկավոր է ժողովի օրակարգի մասին նախապես տեղյակ պահել ծնողներին: Պետք չէ ժողովը վերածել դատի՝ հետ մնացող, անկարգապահ աշակերտների ծնողների նկատմամբ: Այդպիսի ժողովներին ծնողներն աշխատում են չմասնակցել կամ նույնիսկ ժողովից հետո մարմնական պատիժների են ենթարկում իրենց երեխաներին: Ծնողները երեխաների նկատմամբ խրախուսանքներ և պատիժներ կիրառելիս երբեմն սխալներ են թույլ տալիս: Առանձին ծնողներ իրենց երեխաներին դրամական պարգևներ են տալիս լավ թվանշանների համար, ոմանք անարդարացիորեն պատժում են երեխաներին: Լինում են նաև խելամիտ ու արդարացի խրախուսանքներ և պատիժներ կիրառելու օրինակներ: Դասղեկն ի մի բերելով և կշռադատելով այդ ամբողջ նյութերը, հերթական ծնողական ժողովում կարող է զրույց անցկացել «Խրախուսանքների և պատիժների կիրառումը ընտանիքում» թեմայով: Զրույցի՝ կոնկրետ օրինակներով զուգակցումը շատ բան կսովորեցնի ծնողներին: Առանձին դասարաններում ցանկալի է անցկացնել աշակերտների հայրերի ժողովներ և քննության առնել հոր դերը երեխաների դաստիարակության գործում: Այդպիսի ժողովները գործարար աշխուժություն են առաջացնում, նամանավանդ, երբ զեկուցողը կոնկրետ օրինակներ է բերում ընտանեկան դաստիարակության փորձից: Պարտադիր չէ այդ դեպքում անվանել երեխաների դաստիարակությունից խուսափող հայրերի ազգանունները: Ցանկալի է ներկայացնել ընտանեկան դաստիարակության հաջողություններին ու թերություններին վերաբերող կոնկրետ դեպքեր, որպեսզի ծնողները զգան իրենց վրիպումները և

անեն անհրաժեշտ հետևություններ:

Խրախուսելի են նաև ծնողների և աշակերտների համատեղ ժողովները: Քննության են առնվում ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման հարցերը: Աշակերտները ցուցադրում են իրենց նվաճումները ուսման մեջ, պատմում են տարբեր խմբակներում տարվող աշխատանքների մասին [4; 91]:

Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պայմանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե վերջիններս, ըստ իրենց իմացական կարողությունների, հայացքների ու դիրքորոշումների, որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում: Այդ պատճառով էլ ընտանիքի հետ աշխատանքն անհրաժեշտ է կառուցել տարբերակված, չպարտադրել փոխներգործության միատեսակ ձևեր, այլ կողմնորոշվել դեպի ծնողների պահանջմունքները, ընտանիքի և ընտանեկան դաստիարակության յուրահատկությունները, ծնողներին աստիճանաբար ներգրավել դպրոցի, դասարանի և իր երեխայի գործերում: Իսկ դպրոցի և ծնողների համագործակցության հիմքը խմբային ու անհատական աշխատանքի ձևերն են:

Միաժամանակ կան հիմնախնդիրներ, որոնք մտահոգում են բոլոր ծնողներին կամ էլ կապված են դասարանում երեխաների դաստիարակության գործընթացի հետ: Այսպիսի հարցերը քննարկվում են ընդհանուր ժողովների ժամանակ: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական կոլեկտիվի հիմնախնդիրները: Ծնողական ժողովների ժամանակ փոխներգործության կայացման առումով էական նշանակություն ունի ուսուցիչների շփման ոճը: Ժողովների ժամանակ ուսուցիչների մենախոսությունը պետք է տեղը զիջի ծնողների հետ երկխոսությանը, որի ընթացքում փոխանակվում են գաղափարներ, կարծիքներ, համատեղ որոնվում առկա հիմնախնդիրների լուծումներ: Ուսուցիչները պետք է նկատի ունենան, որ ծնողները պատրաստ են քննարկել բոլոր այն հարցերը, որոնք շոշափում են երեխաների հետաքրքրությունները: Դասղեկը մշակում է ծնողներին փոխանցվող հոգեբանամանկավարժական գիտելիքների համալիր, որը ենթադրում է ծնողների գործուն, ստեղծագործական մասնակցություն՝ հարցերի քննարկմանը, ուսումնական պարապմունքների կազմակերպման և անցկացման գործընթացներին: Դպրոցում ծնողների հետ դասղեկի հանդիպումները

թույլ են տալիս համատեղ ջանքերով վճռել դաստիարակության և ուսման բարդ հարցեր: Նման պայմաններում անհատական զրույցի ժամանակ պարզվում են ոչ միայն աշակերտի կյանքի և աշխատանքի դիպվածներ, այլև քննարկվում են նրանց վարքագծի կոնկրետ օրինակներ, ուղիներ են նշվում երեխայի ուսումնական գործունեության, աշխատանքում և առօրյա վարքագծում նկատվող թերությունների շտկման և դժվարությունների հաղթահարման համար: Զրույցի ընթացքում ծնողները կարող են խորհուրդներ ստանալ դպրոցականի տնային ուսումնական պարապմունքներն առավել արդյունավետ կազմակերպելու, նրանց սովորելուն վարժեցնելու վերաբերյալ և այլն [1; 54]:

Ծնողներին պետք է հրավիրել ոչ միայն այն ժամանակ, երբ աշակերտը խախտել է ընդհանուր կարգապահությունը, կամ սկսել է վատ սովորել, այլև պարբերաբար՝ տվյալ սովորողի արտադասարանական ընթերցանությունն արդյունավետ կազմակերպելու, նրան հանրօգուտ աշխատանքի մեջ ընդգրկելու, երեխայի ընդունակությունը որևէ բնագավառում զարգացնելու մասին պայմանավորվելու նպատակով: Անկարգապահ աշակերտների ծնողների հետ հարկավոր է համաձայնության գալ դպրոցականների վրա ներգործելու միասնական պահանջներ և մանկավարժորեն արդարացված միջոցներ կիրառելու մասին: Ընդ որում, պետք է միշտ հիշել, որ առավել արդյունավետ է աշակերտների վրա ներգործման խելացի միջոցների մասին հանգիստ, գործարար զրույցը ծնողների հետ, քան հանդիմանությունները և բողոքները նրա հասցեին:

Ժամանակակից պայմաններում երեխաների դաստիարակության գործում ծնողների հնացած մոտեցումների վառ օրինակ է ընտանիքների մեծամասնության ոչ ճիշտ ազդեցությունը երեխաների բարձրագույն կրթության ընտրությանը: Ընդ որում ծնողները ղեկավարվում են ոչ այնքան երեխաների ապագայի հանդեպ հավակնող ծրագրերով, որքան իրենց համար բարենպաստ պայմաններ ստանալու ցանկությամբ, որոնք երաշխավորում են կայուն զբաղվածություն և բարեհաջող ներգրավվածություն մեծահասակների կյանքում: Սակայն ծնողները հաշվի չեն առնում սոցիալական իրողության փոփոխությունը, որի ժամանակ երեխաների կողմից բարձրագույն կրթություն ստանալը չի հանդիսանում աշխատանքի ընդունման երաշխիք [4; 141]: Մինչդեռ երկրի տնտեսությունն ունի որակավորված բանվորների սուր պահանջարկ:

Ի հայտ է եկել մի իրադրություն, երբ ձեռնարկությունները ստիպված են բացել արտադրություններին կից ուսումնական հաստատություններ՝ հաստիքակազմը համալրելու համար:

Սահմանելով ծնողների հետ շփումների ինտենսիվության մակարդակը՝ մանկավարժներն ընդունում են, որ առավել հաճախ դրանք իրականացվում են ծնողական ժողովների միջոցով: Արևմտյան «դպրոցի» մանկավարժների կատարած կատարած հետազոտությունները պարզել են, որ երեխաների մեծանալուն և նրանց՝ ավագ դասարաններ փոխադրվելուն զուգահեռ, ծնողներն ավելի հաճախ են շփման մեջ մտնում մանկավարժների հետ սեփական նախաձեռնությամբ՝ դպրոցի անհատական այցելությունների կամ հեռախոսազրույցների միջոցով: Այդպիսի պրակտիկան վկայում է, որ երեխաների մեծանալուն հետ ծնողներն ավելի մեծ պատասխանատվություն են զգում իրենց ապագայի հանդեպ:

Դպրոցի և ընտանիքի համատեղ աշխատանքը աշակերտի ուսման առաջադիմության գործում

Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Սակայն, ինչպե՞ս կարող են ծնողները արդյունավետ ներգրավվել դպրոցական կյանքին, և ինչպես կարող է դպրոցը նպաստել նրանց ներգրավվածությանը: Իրականում, ի՞նչ է նշանակում «ծնողների ներգրավվածություն»: «Ծնողների ներգրավվածություն» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով

նպաստեն աշակերտի ակադեմիական առաջադիմության բարելավմանը: «Ծնողների ներգրավվածություն» նշանակում է ծնողների մասնակցություն կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին:

- Ծնողները կարևոր դեր են խաղում որդու ուսման գործընթացում.
- Ծնողները մասնակցում են դպրոցի կազմակերպած միջոցառումներին.
- Ծնողները զավակների ուսման գործընթացում ներգրավված են որպես լիիրավ գործընկերներ և մասնակցում են երեխայի կրթության մասին որոշումների ընդունմանը:

«Ծնողների ներգրավվածությունը» ծնողների համար կարող է նախատեսել.

- Դպրոցական միջոցառումներին հնարավորինս շատ մասնակցություն.
- Երեխայի կողմից լավ կատարված աշխատանքի խրախուսում և գովաբանում ծնողի կողմից.
- Դպրոցի համար ռեալ պահանջների նախանշում.
- Ուսուցիչների հետ կանոնավոր հանդիպումներ և իրենց երեխաների առաջընթացի քննարկում.
- Տնային առաջադրանք կատարելիս աշակերտին օգնության ցուցաբերում.

Տնօրենների և ուսուցիչների համար ծնողի ներգրավումը դպրոցական կյանքում նշանակում է.

- Ծնողներին իրենց երեխաների առաջընթացի մասին համապատասխան տեղեկատվությամբ ապահովում.
- Ծնողների համար տեղեկատվության հաղորդում դպրոցի միջոցառումների մասին.
- Պարբերաբար հանդիպումների կազմակերպում աշակերտների առաջընթացի քննարկման նպատակով. [6]

Կարևոր է իմանալ, որ «ծնող» ասելով չպետք է հասկանալ միայն մայր կամ հայր: Ծնող կարող ենք անվանել այն բոլոր անձանց, ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում: Որպես օրենք, հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման ու կրթության համար, սակայն նրանցից բացի, հաճախ երեխայի

դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, խորթ մայրը, խորթ հայրը, խնամակալը, դայակը և այլն: Այս փաստաթղթում «ծնող» տերմինը նկատի ունի բոլոր այն անձանց, որոնք պատասխանատու են երեխայի դաստիարակման ու բարօրության համար:

Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում: Հետազոտումների համաձայն, աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում. Ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական աձի և հնարավորությունների նկատմամբ հավատ: Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ: Ծնողների ակտիվ ներգրավումը դրական է անդրադառնում և դպրոցական հասարակության, ծնողների և աշակերտության վրա: Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում,, աշակերտն ավելի լավ ձեռքբերումներ է ունենում, չնայած այն բանին, թե ինչպասին է ընտանիքի սոցիալ – տնտեսական կարգավիճակը, էթնիկական ծագումը կամ ծնողների կրթության մակարդակը:

- Աշակերտը, որի ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ ունի.
- Վիճակագրական տվյալներով, եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով, դրանց երեխաների ակադեմիական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է.

- Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի դրականորեն են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն.
- Այն աշակերտները, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված դպրոցի կյանքում, ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ.
- Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ.
- Տարբեր կուլտուրական միջավայրից դուրս եկած աշակերտները ավելի առաջադեմ են, երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են ընտանիքում և դպրոցում եղած կուլտուրական տարբերությունների համատեղ համաձայնեցմանը.

Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես աշակերտի ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար: Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները: Երեխայի կրթության գործընթացին մասնակցելու հետևանքով ծնողը.

- Ավելի է հասկանում սեփական որդուն.
- Ավելի մեծ ուշադրություն է հատկացնում երեխայի սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին.
- Դառնում է ավելի հոգատար, ավելի նվազ խիստ որդու հանդեպ և ավելի շատ է գնահատում որդու ձեռքբերումները.
- Դառնում է ավելի ինքնավստահ և հաճույքով կցվում է երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին.
- Ավելի ինքնավստահ է որոշումներ կայացնելիս.
- Ավելի շատ ուշադրություն է դարձնում սեփական գիտելիքների մակարդակին և ունակություն/հմտությունների բարձրացմանը.

- Ավելի առաջադիմորեն է օգտագործում այկնայլ հնարավորությունները սեփական ընտանիքի և որդու կարիքների բավարարման համար.
- Երեխային տալիս է հնարավորություն, ավելի վստահորեն արտահայտելու սեփական տեսակետները, հիմնխնդիրները: Ավելի դրական հարաբերություններ է ստեղծում իր երեխայի ուսուցիչների հետ:
- Ավելի լիիրավ է տիրապետում երեխայի վիճակի մասին տեղեկությանը և ժամանակին միջոցներ է ձեռք առնում նրա հիմնխնդիրները լուծելու նպատակով:

  Ծնողների հետ ակտիվ համագործակցումն օգնում է ավելի ինքնավստահ դառնալուն:
- Ուսուցչի մոտ հանդես է գալիս ավելի հարգանք սեփական մասնագիտության նկատմամբ.

- Նրանք ավելի են բավարարված իրենց մասնագիտությունից և նրա արդյունքներից.

Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի միջև կապվածության որակը, ինչը օգնում է ուսուցչին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություն երեխայի մասին: Աշակերտի անհատական կարիքների կարգավորումը ուսումնական գործընթացի կողմից ուսուցչին ցանկալի արդյունք կտա:

Ծնողների ներգրավվածությունը դրականորեն է ազդում ընդհանրապես դպրոցի վրա ևս.

- Դպրոցը ծնողների կողմից ավելի աջակցում ունի.
- Աճում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ.
- Դպրոցական ծրագրերը, որոնցում մասնակցում են ծնողները, ավելի հաջողված են, քան այն ծրագրերը, որոնցում ծնողները չեն մասնակցել.
- Այն դպրոցում, որտեղ աշակերտների հաճախումը ճատ ցածր է, ծնողների ներգրավվածության բարձրացումից հետո այդ ցուցանիշը բացահայտորեն կբարելավվի: [6]

Այսպիսով՝ ծնողների ներգրավվածությունից ստացված օգուտը պարզ է: Ծնողների ներգրավվածությունը ոչ միայն բարելավում է աշակերտների վարքն ու հաճախումը, այլև դրականորեն է ազդում աշակերտների ձեռբերումներին: Չնայած սրան, շատ դպրոցներ դեռ փորձում են որոշել և չափել ծնողների գործնական մասնակցությունը և դրանցից շատերը չեն զգում, որ նրանց ջանքերը հաջողություն բերեցին: Ամերիկյան ուսուցիչների վերջին ժամանակներում անցկացրած հարցումների արդյունքում բացահայտվեց, որ նոր մանկավարժների 20 տոկոսը և տնօրենների համարյա մեկ քառորդը ծառայողական սթրեսի կարևոր պատճառը համարում են իրենց՝ ծնողների հետ հարաբերությունները: Ծնողի հաջողված ներգրավվածություն կարելի է հասկանալ որպես ծնողի ակտիվ, կանոնավոր մասնակցություն իր զավակի կրթությանը: Ներգրավվածություն կարող է և տանը լինել, երբ ծնողը երեխաների հետ միասին կարդում է, օգնում է տնային առաջադրանքը կատարելիս և քննարկում է դպրոցի ընթացիկ հարցերը: Որոշ դպրոցներում ծնողը կարող է կամավոր մասնակցություն ունենալ դասարանի գործերում: Նման դպրոցները ծնողների հետ պարբերաբար համագործակցում են և նրանց ներգրավում ուսումնական գործընթացի մեջ: Հաճախ դպրոցները ծնողներին չեն ներգրավում իրենց գործունեության մեջ, մտածելով, որ նրանք գլուխ չեն հանի դրանից: «Սա արդեն նախնական սխալ կարծիք է: Ուսուցիչները գտնում են, որ ընտանիքները չեն ցանկանում մասնակցություն ունենալ, այնինչ, իրականում ընտանիքները չգիտեն ինչպես մասնակցել» հայտարարեց Կարեն Սալինասը (դպրոցի, ընտանիքի և հասարակության հետ գործընկերության կենտրոնի կապերի տնօրեն, Ջոն Հոպկիսի համալսարան, դպրոցում ծնողների ներգրավվածությանը ամենաազդեցիկ աջակցողներից մեկը): Իր հերթին ծնողները երբեմն ձեռնպահ են մնում դպրոցի կյանքին ներգրավումից, քանի որ նրանք ազատ ժամանակ քիչ ունեն կամ, որովհետև նրանք լավ չեն խոսում վրացերեն, ինչպես նաև մեծ հիմնախնդիր է հաղորդակցման պակասը դպրոցի և ընտանիքի միջև: Ծնողները գտնում են, որ նրանց դպրոցում սիրով չեն սպասում: Սա, մասնավորապես, հաճախ բացասական փորձի հետևանք է, որը մտածելու տեղիք է տալիս, որ ծնողի ներգրավվածությունը դպրոցական կյանքին դրական արդյունք չի տալիս: Չնայած հաղորդակցության ոլորտում գոյություն ունեցող արգելքներին, ինչպես դպրոցները, այնպես էլ ծնողները

ցանկանում են որ հարաբերություններն ավելի հետաքրքիր դառնան, եթե դա ի օգուտ աշակերտների կլինի: Public Agenda-ի ոչ կուսակցական հետազոտական և անալիտիկ կազմակերպության կողմից 2003 թվականին անցկացրած 25-ից ավելի հասարակական կարծիքի հետազոտման վերլուծությունը ցույց տվեց, որ մանկավարժների 65 տոկոսի կարծիքով իրենց աշակերտների համար ավելի լավ կլիներ, եթե նրանց ծնողներն ավելի շատ լինեին ներգրավված, իսկ 72 տոկոսը գտնում է, որ երեխաները, որոնց ծնողները չեն մասնակցում դպրոցի ընթացիկ գործընթացներին, ընդհանրապես ծնողներից չեն ստանում այնքան ուշադրություն, որքան ցանկալի կլիներ: Դպրոցները, որոնք հաջողության են հասել ծնողների ներգրավվածության հարցով, միայն ներգրավվածության պարզ սահմանումների շրջանակներում չեն գործում: Նրանք չեն սահմանափակվում միայն ժողովներին ներկա կամ միջոցառումներին սեփական ցանկությամբ ներգրավված ծնողների հաշվարկներով, ավելորդ քանակով. նրանք ավելորդ կողմնորոշված չեն այնպիսի պահանջներին, ինչպիսիք են ծնողի ստորագրությունը աշակերտի տնային առաջադրանքում: Նրանք հավատում են, որ աշակերտի հաջողությունը դպրոցի և ընտանիքի ընդհանուր հետաքրքրությունն է, ուսման պրոցեսում ծնողին գործընկեր են համարում, իսկ հետագայում այս գործընկերության ուժեղացման կոնկրետ ուղիներն են որոշում: Հաջորդ մասում ծնողների ներգրավվածության ոլորտում եղած հիմնխնդիրների լուծման երեք ճանապարհ է ներկայացված.

1) հաղորդակցման բարելավում,
2) ծնողների ներգրավվածության նշանակության մասին դպրոցի աշխատակազմի և ընտանիքի գիտակցության բարձրացում, և հաղորդակցման բարելավում,
3) անհատականացում:

Դպրոցի և ընտանիքի միջև երկկողմանի, կանոնավոր հաղորդակցումը երեխայի զարգացմանը նպաստող կարևոր գործոններից մեկն է: Արդյունավետ հաղորդակցման համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը և ծնողը միմյանց հետ տեղեկություններ փոխանակեն: Մեծ մասամբ տեղեկության հաղորդման համար արդյունավետ միջոցներ են մշակված, օր. տեղեկագրեր, կայքէջեր և դպրոցի տեղեկատվական վահանակներ, որտեղ համապատասխան նյութեր/ուղերձներ են տեղադրվում:

Հաճախ դպրոցներում մշակված են նմանատիպ մեխանիզմներ ծնողների ակտիվ հետադարձ կապի ապահովման նպատակով: Որոշ դպրոց ձգտում է ծնողների ներգրավվածությունը ծնողի աչքով քննարկել: Օր. կարելի է կազմակերպել ծնողական ժողովներ և սեմինարներ ոչ թե դպրոցում, այլ ինչ որ տեղ՝ հարևանությամբ, դպրոցի շատ աշակերտների բնակատեղին մոտ: Դպրոցից դուրս ժողովների անցկացումը կնպաստի ծնողների և դպրոցի միջև լարվածության վերացմանը: Ծնողների արդյունավետ հաղորդակցություն հաղորդակցություն դպրոցի աշխատակազմի և ծնողների գիտակցության բարձրացում անհատականացումՄանկավարժները պետք է խրախուսեն ծնողներին, նրանց տեղեկացնեն, թե ի՞նչ է կատարվում երեխայի կյանքում, խոսեն այն ընթացիկ պրոցեսների մասին, որոնք կարող են ազդեցություն գործել դպրոցում երեխայի առաջընթացի վրա: Հանրակրթական հաստատությունը հստակ տեղեկություն պետք է հաղորդի ծնողներին սպասվող արդյունքների մասին, դպրոցի պլանավորած միջոցառումների, գոյություն ունեցող կարգապահական նորմերի, գնահատման

գործիքների և դպրոցի նպատակների մասին: Տնօրենը և ուսուցիչը ծնողների հետ դրական հաղորդակցման կանոնավոր գրաֆիկ պետք է կազմեն: Դպրոցը պետք է ապահովի ծնողների հետ առաջին շփման դրական լինելը և այդ ժամանակ պետք է նկատի առնվի լեզվական խոչընդոտը և մշակույթային տարբերությունը: Երբ ծնողի և դպրոցի հաղորդակցումը կանոնավոր և արդյունավետ է, աճում է ծնողների ներգրավվածությունը, նրանց կողմից դպրոցի գնահատումը բարձրանում է և ձևավորվում է դպրոցի նկատմամբ դրական կապվածություն:

ԳԼՈՒԽ 2

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության նախապատրաստումը և այդ ուղղությամբ աշխատանքի կազմակերպումը

Աշակերտների ցածր առաջադիմության պատճառների և դրանց հաղթահարման ուղիների բացահայտման ուղղությամբ մեր կողմից իրականացվել է սոցիոլոգիական հարցում հիմնական դպրոցի ուսուցիշների և ծնողների շրջանում: Մեր կողմից կազմվել է երկու հարցաթերթ

Վերլուծենք հարցման արդյունքները: Ուսուցիչների հարցման արդյունքում ստացվելէ հետևալ պատկերը:

1. Արդյո՞ք երեխաները բավարար ընդունակություններ չունեն սովորելու, թե՞ պարզապես չեն ուզում սովորել:

   1. Այո
   2. Ոչ
   3. Չգիտեմ



Ուսուցիչների հետ անցկացրած հարցադրումների արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ 25%-ը պատսխանել է այո, 25%-ը ոչ, 50%-ը չգիտեմ:

2. Ուսումնական ցածր առաջադիմությունը կանխելու համար օկտագործում եք՞ որևէ մեթոդներ:

1. Այո
2. Ոչ
3. Ոչ հաճախ



Ուսուցիչների հետ անցկացրած հարցադրումների արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ 10%-ը պատասխանել է այո, 30%-ը ոչ, 60%-ը ոչ հաճախ:

3. Անհրաժեշտ է երեխային օգնել, հասկանալ իր ուժեղ ու թույլ կողմերը, որպեսզի կանխի ուսումնական ցածր առաջադիմությունը:

1. Այո
2. Ոչ
3. Չեմ կարծում



Ուսուցիչների հետ անցկացրած հարցադրումների արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ 70%-ը պատասխանել է այո, 20%-ը ոչ, 10%-ը չեմ կարծում:

4. Ուսումնական գործունեության կազմակերպման համար արդյո՞ք անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմանները, որը կնվազեցնի երեխայի ցածր առաջադիմությունը:

1. Այո, միանշանակ
2. Չգիտեմ
3. Ոչ



Ուսուցիչների հետ անցկացրած հարցադրումների արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ 80%-ը պատասխանել է այո,միանշանակ, 10%-ը չգիտեմ, 10%-ը ոչ:

5. Արդյո՞ք կոնֆլիկտային իրավիճակներում հաճախակի հայտնվող աշակերտը կարող է կենտրոնացնել իր ուշադրությունը դասերի վրա:

1. Այո
2. Ոչ
3. Չգիտե



Ուսուցիչների հետ անցկացրած հարցադրումների արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ 60%-ը պատասխանել է այո, 30%-ը ոչ, 10%-ը չգիտեմ:

Ծնողների շրջանում իրականացված հարցման արդյունքում ստացվել է ստորև ներկայացվող արդյունքները:

1. Ընտանեկան խնդիրներն ու անբարենպաստ մթնոլորտը, արդյո՞ք ազդում են երեխայի ուսումնական մոտիվացիայի վրա:

1. Այո
2. Ոչ
3. Չգիտեմ

Ծնողների հետ անցկացրած հարցադրումների արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ 70%-ը պատասխանել է այո, 20%-ը ոչ, 10%-ը չգիտեմ:



2. Արդյո՞ք Դուք պատշաճ աջակցություն և հետևողականություն եք դրսևորում երեխայի ուսումնական գործունեության հանդեպ:

1. Այո
2. Ոչ հաճախ
3. Ոչ



Ծնողների հետ անցկացրած հարցադրումների արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ 50%-ը պատասխանել է այո, 30%-ը ոչ հաճախ, 20%-ը ոչ:

3. Ինչ՞ եք կարծում, ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին ուսուցիչները ավելի վատ են վերաբերվում մյուսների համեմատ:

1. Այո
2. Չգիտեմ
3. Դժվարանում եմ պատասխանել

Ծնողների հետ անցկացրած հարցադրումների արդյունքների վերլուծությունից պարզդարձավ, որ 40%-ը պատասխանել է այո, 40%-ը չգիտեմ, 20%-ը դժվարանում եմ պատասխանել:



4. Դուք Ձեր երեխայից միայն գերազանց գնահատականներ ե՞ք սպասում բոլոր առարկաներից:

1. Այո
2. Ոչ
3. Դժվարանում եմ պատասխանել



Ծնողների հետ անցկացրած հարցադրումների արդյունքների վերլուծությունից պարզ դարձավ, որ 30%-ը պատասխանել է այո, 60%-ը ոչ, 10%-ը դժվարանում եմ պատասխանել

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տեսական ուսումնասիրությունների և գործնական հետազոտությունների արդյունքում, հանգեցինք այն եզրակացության, որ՝

1. Ուսուցումը անցյալի փորձի արդյունքում ձևավորված ադապտիվ անհատական վարքի փոփոխությունն է: Այդ փորձի ձեռքբերումը պայմանավորվում է ճանաչողական դրդապատճառներով և նպատակներով: Ուսուցման շնորհիվ մարդու և կենդանիների գիտելիքները թարմանում են, ձեռք են բերվում նոր հմտություններ և կարողությունները, ինչը հանգեցնում է առավել հարմարվողական վարքի ձևավորմանը:
2. Կրթական գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Այն օգնում է պարզել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների մակարդակը, ինչպես նաև ստանալ դպրոցի կողմից առարկայական ու դպրոցական չափորոշիչների ու ծրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը: Նոր մոտեցումներով գնահատումը, ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման կարգավորման, վերհսկման և բարելավման մեխանիզմ:
3. Երեխայի համար ուսումը նշանակալից գործունեություն է: Դպրոցում երեխան ձեռք է բերում ոչ միայն նոր գիտելիքներ, կարողություններ, այլև որոշակի սոցիալական կարգավիճակ: Բարձր ինքնագնահատականը շատ երեխաների մոտ հանգեցնում է նրան, որ նրանք դժվարանում են հասկանալ մանկավարժական գնահատման չափանիշները: Իրենց ուսումնական գործունեության գնահատականը նրանք համարում են ամբողջ անձի գնահատական: Բացասական գնահատականները, դիտողությունները նրանց մոտ առաջացնում են տագնապայնություն, անհարմարության վիճակ, ինչի հետևանքով աշակերտներից շատերը դառնում են պասիվ: Երեխայի հուզական վիճակից կախված վարքի անկայունությունը դժվարացնում է

ինչպես մանկավարժի հետ հարաբերությունները, այնպես էլ դասի ժամանակ երեխաների կոլեկտիվ աշխատանքը։ Բարձր ինքնագնահատականը շատ երեխաների մոտ հանգեցնում է նրան, որ նրանք դժվարանում են հասկանալ մանկավարժական գնահատման չափանիշները։ Իրենց ուսումնական գործունեության գնահատականը նրանք համարում են ամբողջ անձի գնահատական։

4. Դպրոցական առաջադիմության, ուսումնական աշխատանքի արդյունքների գնահատման խնդիրը կենտրոնական է կրտսեր դպրոցական տարիքում։ Գնահատականից է կախված ուսումնական մոտիվացիայի զարգացումը, հենց այս հիմքի վրա էլ առանձին դեպքերում առաջանում են ծանր ապրումներ, դպրոցական դեզադապտացիա։ Երեխաները, կենտրոնանալով ուսուցչի գնահատականի վրա, իրենք իրենց և իրենց համադասարանցիներին համարում են գերազանցիկներ, «երկու ստացողներ», «միջակներ» և այլն՝ յուրաքանչյուր խմբի ներկայացուցիչներին վերագրելով համապատասխան որակներ։ Դպրոցական ուսուցման սկզբում առաջադիմության գնահատումը, ըստ էության, հենց անձի գնահատում է՝ պայմանավորելով երեխայի սոցիալական կարգավիճակը։ Գերազանցիկների և լավ սովորողների մոտ հաստատվում է բարձր ինքնագնահատական։ Ցածր առաջադիմությամբ աշակերտների մոտ սիստեմատիկ անհաջողությունները և ցածր գնահատականները նվազեցնում են իրենց նկատմամբ վստահությունը։ Նրանց ինքնագնահատականը յուրահատուկ է զարգանում։ Հետ մնացողների շարքերից դուրս գալու, առավել բարձր կարգավիճակ ձեռք բերելու չիրացված պահանջմունքն աստիճանաբար թուլանում է։ Ուսուցման սկզբում դրսևորվող բարձր ինքնագնահատականը խիստ նվազում է։

5. Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ։ Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում։ Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են

աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար: Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ամիրջանյան Յու.Ա., «Մանկավարժություն», Երևան, 2005:
2. Աստվածատրյան Մ.Գ. և ուրիշներ, Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը, Այռեքս, Երևան, 2007թ., 336 էջ:
3. Գրիգորյալ Վ.Հ. Հոգեֆիզիոլոգիա; Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2007
4. Գևորգյան Լ.Վ., Մանկավարժական վալեոլոգիա, դասախոսություններ, Գյումրի, 2014թ., 32 էջ:
5. Է. Դ. Աղայան «Արդի հայերենի բացատրական բառարան»
6. Հանձնարարականներ տնօրենների և ուսուցիչների համար. Ծնողների ներգրավվածությունը, ԹԲԻԼԻՍԻ 2015
7. Հանրակրթության պետական կրթակարգ. Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան, «Անտարես», 2004:
8. Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն», Երևան, 2008թ., 9 էջ:
9. Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն.Ընդհանուր դրույթներ, հիմնական մոտեցումներ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2005
10. Յու. Կ. Բաբանսկի, Մանկավարժություն Ե, 1986, 159:
11. Պոլոնսկի Վ.Մ., Դպրոցականների գիտելիքների գնահատումը, Երևան, «Լույս» 1983թ,, 91 էջ:
12. Սովորողների գնահատման հայեցակարգ, ՀՀ ԿԳՆ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2005
13. Айсмонтас Б. Б. Педагогическая психология, Москва 2004.
14. Блум Ф., Лейзерсон А., Хофстедтер Л.; М.; Издательство "Мир" 1988:
15. Божович Л.И. Личность и его формирование в детском возрасте. М.,1968
16. Венгер А.Л., Венгер Л.А. Готов ли ваш ребенок к школе? М., 1994.

17. Венгер А.Л. Психологическое готовность детей к обучению в школе//Развитие мышления и умственное воспитание дошкольника. М.,1985.
18. Выготский Л.С. Кризис семи лет// собр. соч.: В 6 т. М.,1984, Т. 4.
19. Джуринский А. Н., История образования и педагогической мысли.-М.: Владос-Пресс, 2004.-254 с.:
20. Домнина Н. В. Профессиональная компетентность современного педагога.:
21. Дыхан Л. Б., Кукушин Б. С., Трушкин А. Г., Педагогическая валеология. Март, 2005.-527 с:
22. Зимняя И.А. Педагогическая психология, Москва • «Логос» • 2000
23. Мохнач Н.Н., Валеология. Конспект лекций: Учебное пособие для вузов, Ростов-на-дону, Феникс, 2004.-256с.
24. Кулагина И.Ю., Колюцкий В.Н.Возрастная психология: Полный жизненный цикл развития человека. Учебное пособие для студентов высших учебных заведений. — М.: ТЦ «Сфера», 2001.-464с.
25. Науменко М. В. Исследование профессиональных представлений педагогов с различным уровнем профессиональной компетентности.
26. Сластенин В. А. Формирование личности учителя советской школы в процессе профессиональной подготовки. Москва: 1976, 164 с.:
27. Основы психофизиологии: Отв. ред. Ю.И. Александров.; М.: ИНФРА-М, 1997:
28. www.irtek.am>views>act, «Հանրակրթության պետական կրթակարգ», ՀՀ ԿԳՆ, 2004թ.:
29. www.e-gov.am>kar>2011/07, «Հանրակրթության պետական չափորոշիչ», Երևան, 2011թ., 56 էջ:
30. www. dpir.mskh.am>node:
31. www.lomonpansion.com/articles_2_3282.html:
32. www.moluch.ru/archive/80/13816: